ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հունիսի 2021 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՅՈՒՔՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱՑԱՆՑԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԱԶԱՏ ԹՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՄԱՆ ԲԱՎԱՐԱՐ ՀԻՄՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի մայիսի 31-ի գրությունը, որով Ընկերությունը հայտնել է, որ Երևան քաղաքի Հին Նորք-Մարաշի 1-ին նրբանցքի 5/5 հասցեում վարձակալության հիմունքներով «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերությանը խողովակաշարի ազատ թողունակություն տրամադրել չեն կարող, քանի որ նշված հասցեն սպասարկող ստորգետնյա ենթակառուցվածքի ծանրաբեռնվածությունը խողովակաշարի որոշ հատվածներում 80 տոկոսից ավելի է,

բ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի հունիսի 4-ի գրությանն ի պատասխան Ընկերության 2021 թվականի հունիսի 10-ի գրությունը, որով վերջինս Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 5-ի №593Ն որոշմամբ հաստատված՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից հանրային ամրակցված հեռախոսացանցի գծերի ենթակառուցվածքների գտնվելու վայրի և առկա թողունակության մասին տեղեկությունների տրամադրման կարգի պահանջներին համապատասխան ներկայացրել է ենթակառուցվածքի խնդրո առարկա խողովակաշարի 80 տոկոսից ավելի ծանրաբեռնված լինելու վերաբերյալ տեղեկատվություն,

գ) Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշմամբ հաստատված՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնները (այսուհետ՝ Կանոններ), որի 1-ին կետի համաձայն՝ խողովակի ազատ թողունակություն է համարվում պահանջվող հասցեների միջև հանրային ամրակցված հեռախոսացանցի գծի ենթակառուցվածքի մաս կազմող խողովակի ուղղահայաց կտրվածքի մակերեսի 70 տոկոսի չօգտագործված մասը, իսկ կանոնների 2-րդ կետի համաձայն՝ ...եթե խողովակի ազատ թողունակությունը սպառված չէ և որևէ օպերատորի կողմից հայտ է ներկայացվել ազատ թողունակության վարձակալության համար, ապա որպես խողովակի ազատ թողունակություն կարելի է օգտագործել խողովակի ուղղահայաց կտրվածքի մինչև 75 տոկոսը՝ ներառյալ պահանջվող թողունակությունը,

դ) որ Կանոնների 17-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գերիշխող օպերատորը իրավասու է մերժել օպերատորի դիմումը, եթե Հանձնաժողովին ապացուցի, որ խողովակների ազատ թողունակությունը սպառված է, իսկ Կանոնների 19-րդ կետի համաձայն՝ եթե դիմումը մերժելու հիմք է հանդիսանում Կանոնների 17-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանը, ապա դիմումը մերժելու հիմքի ապացույց կարող է համարվել նաև Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 5-ի №593Ն որոշման 1-ին կետով սահմանված՝ գերիշխող օպերատորի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկությունները,

ե) որ Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված դիմումը մերժելու պատճառ հանդիսացող հիմնավորումները (այդ թվում՝ կից ապացույցները), գտնում է, որ առկա են Ընկերության կողմից «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմումի մերժման բավարար հիմքեր՝ ելնելով այն հանգամանքից, որ խնդրո առարկա խողովակաշարի՝ 85/7, 85/8, 85/9, 85/10, 85/11 և 85/12 դիտահորերի միջև ընկած հատվածները 80 տոկոսից ավելի ծանրաբեռնված են, և

հիմք ընդունելով Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Ընդունել Ընկերության կողմից «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերության հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության

վարձակալության տրամադրման դիմումի մերժման բավարար հիմքերի առկայությունը և թույլատրել Ընկերությանը մերժել դիմումը:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

   1) սույն որոշումը հրապարակվելուց հետո երեսուն օրվա ընթացքում Հանձնաժողովին հասցեագրված միջնորդության հիման վրա կարող է վերանայվել.

   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հունիսի 2021թ.